Ոսկեհասկ

Ոսկեհասկ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1694.4 հա, բնակչությունը 2006 մարդ: Բնակավայրը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, Շիրակի դաշտում՝ ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Պետական հողերում մեծ տեսակարար կշիռ ունեն արոտավայրերը: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: 1967թ.-ից օգտվում է ինքնահոս Ղազանչի ջրագծից: Բնակավայրում գործում է հանրակրթական դպրոց, մանկապարտեզ: